

ԼՈՌՈՒԱՅ ՀԱՐՍԱՆԻՔ

Նշանադրութիւն: Լոռում նշանադրութիւնը երկու տեսակ է՝ լինում, որոնցից առաջինը, որ, «Ո քօքացախազ» է կոչւմ, աւելի պարզ և հասարակ ձեւ է ներկայացնում: Ընտանիքի մեծը, —կամ հալլը, կամ մալլը, լոյս ունենալով, որ խոր խնամիք իրանց միշտ պաշտպան կ'լինին զանագոնդիւղական գործերի մէջ և թէ՛ օգնական, իրանց տղայ—որդու համար, համաձայնութիւնը ստանալուց յետ, նշանաձեն ընտրում կաթնակեր փոքրիկ աղջկանը, որի համար և՛, իրբև նշան, օրօրոցի միջնափայտի վրայ խազ են քաշում: Արդ օրից սկսած խնամիական յարաբերութիւնները շարունակում են փոփագարձ հիւրասիրութիւններով և ընծաներով: Երբ աղջկեր հասակն առնում է, այն ժամանակ սկըսում են աւելի գրական միջոցների գիմել և հաստատուն համարել տալ, որովհետև շատ է պատահում, որ նշանուածաղջկերքը, չհաւանելով իրանց նշանաձներին, չեն համաձայնում իրանց կեանքը ամուսնական կապով առմիշտ գրտնց հետ կապել: Արդպիսի մերժումներ լինում են ինչպէս աղջկայ, ալնապէս և՛ տղայի կողմից:

Նշանադրութեան երկրորդ ձեւը աւելի բարդ է: Ընտանիքի մեծը՝ ոչք գնելով մէկի վրայ՝ խնամախօսներ է ընտրում և զանագան գրաւիչ միջոցներով աշխատում համաձայնութիւն ստանալ իւր որդու հետ ամուսնացնելու նըպատակով: Խալաթներ տալը աղջկայ ծնողներին կամ մօտիկ բարեկամներին միտեսակ կաշառակերութիւն է դարձել,

որից շլացած իրանց համաձայնութիւնը վերջ ի վերջոյ տալիս են. շատ անգամ համաձայնութիւնը դիտմամբ ձգձգում են, որպէսզի որկրամոլները շատ ժամանակ ունենան նոր խնամի դարձողին լաւ ծծելու: Եթէ ինտամախօսական բանակցութիւնները յաջող ելք չեն ունենում, տղաները շատ անգամ փախցնում են հարսնացուներին, կամ տնից դուրս քաշելով, կամ ալգու, կամ ջրի ճանապարհից, կամ սարից, կամ հնձատեղ հաց տանելիս և ալլն: Երբ իրենք միայնակ, կամ միքանի ընկեր տղերանց հետ միասին փախցնելիս աղջկայ կողմից մարդիկ են պատահում, կրիւ է ծագում և շատ անգամ միմեւանց վիրաւորում են: Փախցրած աղջկանը միքանի շաբաթ պլահելով կամ գոմերում, կամ հնձաններում, կամ հարեւան գագաններում, վերջապէս յաջողւում է վիրադառնալ տղայի տուն, այն էլ երբ տղայի հալը աղջկայ կրակ կտրած կամ հօրը, կամ եղբօրը և կամ աւելի մօտիկ ազգականին մեծ տուգանք է տալիս և հաշտուում: Ալգպիսի դէսլքերում, համարեան թէ բոլորը առանց պատժի են մընում և հաշտութեամբ վերջանում է: Վերագարձողները պսակուում են, բայց, ոչ որպէս ազապներ, ալլ ալյրիներ:

Սովորական ընդունուած նշանադրութեան համար եթէ խնամախօսները յաջող ելքի են հասնում, այն ժամանակ տղի հալը կամ մօտիկ ազգականը բելգահ է տալիս, այսինքն նշան, կամ մատանի, կամ մի-երկու հատ ոսկի փող, հետը և՛ մի շիշ օդի, գաթաներ, եփած հաւեր, կարմիր ձու, գառան մսի խաշլամալ, չոր մըգեղէններ և ալլն: Մրանց հետ տանում են և՛ ընտանիքի միւս անդամների համար խալաթներ—ոտնամաններ կամ աղջուխներ: Ալգ տեսակ նշանադրութիւնից յետոյ արգէն տղայի ոտքը բացւում է դէպի իւր նշանածի տունը, շնորհիւ կամ բարեհոգի միջամարդ ալլ կնոջ և կամ գոքանչի, այն էլ գաղտնի, գիշերով, և ոչ թէ աշկարայ: Այս ժամանակն է՝ որ փեսացուին բոլորովին ծծում են, պահանջելով բերել այնպիսի բաներ, որպիսիք ինեղնի ոյժից բոլորովին վեր են: Առաջին նշանադրութիւնից յետոյ, երբ արգէն պսակուելու ժամանակը մօտենում է, կատարում են բար-

դակտրէք, որի էսութիւնը արև է,—տղայի հալլը, կամ մօտիկ ազգականը, միքանի պատռւաւոր մարդկանց հետ, գնում է աղջկայ տուն, տանելով դարձեալ օդի և ուսելիք —պատրաստութիւնն Երեկոյեան ընթրիքի ժամանակ նոր խնամիների կենացը խմելով, որոշում են, թէ Բնչ բաժինք պիտի բերէ աղջիկը. հարսանիքի ժամանակ տղայի հալլը Բնչ մսացու ոլէտք է տալ, նոյնպէս և՝ խմչքներ —օդի և գինի. և թէ՝ Երբ պիտի հարսանիքը նստի. միքանի դէպքերում էլ պահանջուում է բաշլը —գլխագին, եթէ տղան ալրի է լինում, կամ ծեր, որի քանակութիւնը ըստ կարողութեան, երեմն և՝ մինչև հարիւր ուուրլու է հասնում: Բարգակտրէքի համար դնացած մարդիկ, գեռ իրանց գործը չակած, պահանջում են իրանց հարսնացուն ցոլց տալ: Հարսը գալիս է և ամեն մէկի ձեռքը համրուրում, որի համար և եկած խնամիները իրանց երես տեսնուեկին են տալիս մի երկու արատուց սկսած մինչև մի ուուրլին, իսկ որա փոխարէն հարսը ուարտաւորում է, պսակուելուց լետ, իւր գործած գուլպաներից և պամիճներից մէկ-մէկ ընծալ ուղարկել:

Հարսանիքի մեծ պատրաստութիւնը աւելի տղայի տանն է տեսնուում: Մի օր առաջ ընակարտանը մաքրում են, տան մուրը թափում, և չորս պատերից մէկի տակ թախը պատրաստում. որի վրայ գցում են գորգեր, իսկ պատից էլ կախ անում ձևնելեր. ամբողջ օրն էլ կանալք հաց են թըլիում: Հարսանիք նստելու երեկոյեան (գլխաւորապէս ուրբաթ) կանչում են փողհարին—գուռնաշչուն—բերում են մսացուն, —կամ եղ, կամ կով, ինչպէս և՝ ոչխարներ. գալիս է և փեսալացուն: Հէնց առաջին անգամ փողը հարելուն պէս, տղայի մայրը կամ մօտիկ ազգականը պար է գալիս և մի աղլուխ—խալաթ տալիս գուռնաշչուն. նոյնպէս խալաթ է տալիս և՝ մսացու մորթողին, որը, գանակը վայր գցած կենդանու բիին դրած, սպասում է: Փեսայի մայրը կամ քոյրը դարձեալ պարելով՝ մէկ թաշկինակ—ուսապանդ է կտպում փեսայի վզից: Զարը խափանելու նպատակով էլ, փեսայի

մալրը մի կտոր թել է գցում մսացուի արիւնի մէջ, շաղախում և ապա պահում մինչև առագաստ մոնելը:

Հարսանիքը նստելուց մի օր առաջ աղջկայ տուն են ուղարկում մսայուն և խոստացած խմիչքեղէնները, ինչպէս և՝ հարսանացուի մօր կաթի իրրև վարձ, թանկազին խալաթի: Հարսանիքն արդէն սկսուեցաւ. պար եկողների երակները եռում են՝ էլ հանգստութիւն չեն տալիս փողհարներին. ալդպէս շարունակում է մինչև լաւ մթնանալը: Կազմում է և՝ մակարների խումբը. թագաւորը, հանգերձը օրհնելուց յետոյ, հագնելով իւր հարսանեկան շորերը, զուռնա—գըհոլով, ճրագները վառած, մանաւանդ ակեց ծառի կեղեր և պէտքի ծղանները, գնում է խաչեղբօր տուն: Հրաւիրելու: Տուն մտնելով համբուրում են, սկսում են միմեանց կենաց խմել, պար գալ և ապա՛ խաչեղբալը, թագաւորի և մակարների տուաջ թուրը կտալելով, գալիս են նոյնպիսի ուրախութեամբ թագաւորի տուն, ուր ուրախութիւնները անընդհատ շարունակում են: Թագաւորը, խաչեղբալը և մակարները նստելով թախտի վրայ, կանչում են ստիրիչին բոլորի երեսները վալը անելու: Երբ թագաւորի երեսի կէսը վալը է անում, չի շարունակում, մինչև որ խաչեղբօրից խալաթ չստանայ: Արդ գիշեր ընթրիքի են հրաւիրում գիւղի բոլոր մեծամարդոց, ուտում-խմում են և քէֆ անում զուռնայով: Ուրախութիւնն աւելի է սաստիանում, երբ հաւաքում են հարսանքատուն սարերից և ձորերից տաւարածները, որոնք նոյնդէս մտանակցում են ընդհանուր պարերին, խաղալով ինչպէս կենդապարեր, այնպէս և՝ զոփի: Երբեմն և կոխ են բռնում միմեանց հետ երկուերկու հոգի, բոյորը զուռնայի ներգաշնակութեան տակ: Առաւօտեան արդէն պատրաստում են սհարսնառ գնալու, բոլորեքեանք ձիաւորում են և ճանապարհ ընկնում դէպի հարսանց գիւղը. շատ քշում են ձիանքը, և ատրճանակներ արձակում մակարները, որոնք իրրև թիկնապահներ են հանդիսանում թագաւորի և թագուհու համար: Հասնելով հարսնետուն, փոխադարձ բարեները ստանալով, հրաւիրելու են

ներս. շատ անգամ դեռ տուն չժաման՝ լինում են և՝ կռիւներ, պատճառ բերելով. թէ վեսան խռոտացած փէշքաշները չի բերել կամ թէ՝ պակաս է: Նստելով պատրաստած թախտի վրայ և փոքր ինչ հանգուտանալով, օրհնում են հարսի հալաւը, որից յետ պահճներ և գուլպաներ են հագցնում թագաւորին և խոչեղբօրն. տալիս են և՝ նորահարսի գործած քիսաներ. կտպում են թագաւորի գոշից, մինչև զօտին, աղլուխները: Հայութը տանում են և հագցնում հարսին, որը նոյնալէս տղայի տանից է հարսանքաւորի հետ բերուած. ալդ հաքցնում են ջահէլ կանալք և օրիորդներ, իսկ զօտին միայն կապում է խոչեղբարյը, որը, նոյնալէս երեսուն ու ուն ու կ տալով, տառմ է «առջինեկը տղայ ըլիս: Դօտին կտպելուց յետոյ հարսին տանում են թագաւորի մօտ, ուր միմեանց բարեկլով, աղջիկալ կամ հայրը, կամ մօտիկ տղականը, ձեռք ձեռքի տալով, օրհնում է և տառմ «Ճըլիք ու ծաղկիք, մի բարձի ծերանաք, որդիկերտնց ու թոռների տէր րիք, գուշմանի սրտով չըլիք, չար նետթից Աստուած ձեզ հեռու պահէս: Օրհնանքից յետոյ զնում են, զուռնաւդըհոլ ածելով եկեղեցի. առաջ գնում է խոչեղբարյը, յետոյ՝ թագաւորյը, և յետոյ՝ հարսը. իսկ սրա երկու կողքին էլ լինում են հարսնեղբարյը և հարսանքորը. գրանց չեղած ժամանակ՝ մօտիկ աղգականներից են լինում և նոյն պաշտօնը կտարարում: Պատկ գնալու ժամանակի մակարների ամենամեծ զգուշութիւններից մէկն և՝ այն պէտք է լինի, որ նրանք թագաւորի և հարսի արանքով թոյլ շտան մարդ անցկենալու, որովհետեւ գժրազգութեան վատ նշան է ալդ: Եկեղեցում պատկը վերջանալուց յետոյ, նոյն կարգով վերագառնում են գարձեալ հարսի տուն, արձակելով հրացաններ և ատրճանակներ: Տուն վերագառնալիս՝ ճանապարհին նորապոտկների առաջ պար են գալիս ցանկացողները. նուէր են բերում փոփը իս կոչուած ծառը, որը խաչեղբարյը տալիս է մէկ լաւ պար եկողի, որ ձեռքին բռնած մինչև տուն իրանց առաջ պար գայ. փոփիը հալերի ամենահին մագաներից մէկն է, որին այժմ փոխարինում է նորամուտ ևոնտ-

ծառը։ մեր հայերի գործնական փոփըխ բառը աւելի իմաստալից է և նշանակութիւն ունեցող «փոփըխ» հին պիոփոխը բառի աղաւադումն է, որ նշանակում է զանազան ակերպութիւն։ և՝ արդարեւ արդպէս էլ է։ մէկ բարակ, վերևի ծալը սուր, ճիպոտի կողքերին տնկած են մանր ճղներ և շիւեր, իբրև ծառ։ ճղների և շիւերի վրայ, ինչպէս և՝ ծառաբնի գլխին՝ ցցում են կամ խնձոր, կամ սերկեիլ, կամ տանձ, դրանց չճարուած ժամանակ՝ ներկած ձու և այլն, իսկ ճրպների արանքներով փաթաթում են շարուկներ՝ կամ չամիչ, կամ սիմինդրի և կամ այլ պատրաստած մրգեղէններ։ կըպցնում են և՝ փոքրիկ մոմեր։ նորապսակները երբ տուն են վերագառնում, այդ փոփխը յանձնուում է խաչեղբօրը, որը և պատուանգանի վրայ է ցցում և թագաւորի առաջ դնում, մոմերը վառել տալով։ ճանապարհին իրանց քաջութիւնը ցոյց են տալիս և՝ կոխ բռնողները—փահլւանները, որոնցից յաղթողը խալաթ է ստանում խաչեղբօրից։ միքանի մարդիկ էլ չոքում են նորապսակների առաջ՝ դռների շէմքով անցնելիս՝ և խնդրում են իրանց փող բաշխել։ Հարսանիքը որ ճանապարհով գնում է, այնտեղի բարեկամ տնուորները նորապսակների առաջ բերում են սինիոյ ձուաձեղ և լոշ, որից բաժին վերցնելով թագաւորը և խաչեղբայրը, մնացածը անցնում է մակարներին։ Այստեղ աղջկալ բարեկամները տալիս են և իրանց նորապսակ աղջկանը ընծայ՝ կամ շալ, կամ պղնձեղէն ամաններ և այլն։ նոյնպիսի ընծաններ տալիս են բարեկամները և՝ տան գուանը։

Հասնելով տուն, նորահարսին տանում են կանանց գասը, իսկ թագաւորը և միւսները բազմում են թաղթի վրայներեկոյեան հացի ժամանակ թագաւորը ոչիչ չի ուտում, մինչև որ աները կամ աւելի մօտ ազգականները գքերանը բաց էք շխոստանան։ աները խոստանում է կամ ձի, կամ կով, կամ փեթակով ճանճ, կամ արծաթեղէն և այլն, ապա բերում են ձուաձեղ, կամ թէ՛ ուրիշ ազիզ կերակուր թագաւորի համար։ Հացից յետոյ էլ ուրախութիւնը գուանալով շարունակում են մինչև լոյս և ապա պատրաստութիւն են

տեսնում աղայի տուն գնալու։ Ամենից առաջ բերում են հարսի բաժինքը^(*), որը միաւոմի զուռնաշխն լիշում է բարձր ձայնով և ասում «Ճն կենալ բարեկամը, տուել ա այս ինչ բանը» և այն՝ գինը տասնապատիկ աւելացնելով։ ներկայ եղաներն էլ պատասխանում են՝ «Ճնորհաւոր ըլի՛», Երբ բոլորը միաւոմի ցոյց են տալիս, ապա գարսում են մափրաշների մէջ, բռու կապում և ուղարկում թագաւորի տուն։ Նախապէս թագաւորի հալրը կամ մօտիկ ազգականը փէշքաշ է տալիս այն մարդուն, որը գարսած բաժինքի վրայ նստում է և թողլ չի տալիս բարձել մինչև իւր ընծալ ստանալը։ Բաժինքից առաջ մի լաւ ձիւոր են ուղարկում տղայի տունիմաց տարու հարսանիքի գալը, որի համար և՛ թագաւորի տանը համբաւաբեր մակարի ձիու ականջից մի աղջուն խալաթ են կախ անում. այդ համբաւաբերին ասում են՝ «աղուէս» ծանապարհ ընկնելու համար երբ պատրաստում են, ապա փողհարն գուրսը իւր տարան հայն» է զշշում և լացացնում աղջկայ ծնողներին և ազգականներին ու բարեկամներին, որոնք հերթով գալիս են և նրան բարիերթ մազթում։ հարսի հետ գնում է փեսայի տուն միայն հարսնեղբայրը ծանապարհ ընկնելով՝ մակարները սկսում են ալսոնզ ևս ձի խաղացնել և իրանց «հունարը» զանազան կերպ ցոյց տալ։ Երբ հասնում են գիւղի մօտ՝ կրկին զուռնան ածել են տալիս և՛ ձի խաղացնելով՝ գնում են եկեղեցու գուռը, ուր՝ իջնելով՝ մտնում են եկեղեցի, համբուրում ուրբ պատկերները և ապա կարգով, ինչպէս պսակի ժամա-

^(*) Բաժինքը լինում է. — Խալիչալ, չէջիմ, ձունձ, թաղիք, ձիու զէարի ու երիշին, հարսին տեղաշոր, մափրաշ, խուրջին, ջուալ, թոփրալ, աղաման, սանրաման, պաճիններ ու պաճինակապեր, գուլպաններ ու տոլազներ, թութունի ու փողի քիսաներ և քաշկի. Արծաթի բագեալ, արծաթի հազար փէշալ, արծաթի գինու թաս, արծաթի քամար, բոլինբազ և թերի բաժումներ. Պղնձէ ամաննեղէններից — ջրի կուժ, պղինձ, տնկանի, բազեալ, կովկիթ, սինի, ջրի թաս ու տոլչալ, մաթլաբաններ—մէծ և փոքր, Նալելով կարողութեանը, պալմաններին, զրածներիս տեսակները լինում են շատ և քիչ.

նտի, ստով փեսայի տուն դառնում. այս ստագարձի ժամանակ էլ այնպիսի պարեր, կոխեր, ձռաձեղներ և ընծաներ են լինում, ինչպէս աղջկալ զիւզումն միայն այստեղ ընծալ արուողներ տւելի են լինում, մանաւանդ այն ժամանակ, երբ հարսանիքը դուռն է հասնում, ուր թագաւորի մայրը գալով՝ համբուրում է հարսին ու որդուն և՝ արծաթի թասով շարքաթի խմեցնելով, աղաքալ կեանքի քաղցրութիւն մաղթում ու ընծայ տալիս. Ընծալ է տալիս և՝ հայրը, համբուրելով՝ հարսի ձեռք. բարեկամներն էլ նուիրում են փող, արծաթեղէններ և պղնձէ ամանեղէններ. Երբ հարսը կոխում է տան շեմքը, բերում են լոշ հացեր, որոնց նա տան չորս կողմի վրայ շպրտում է, առատութիւն մաղթելով. Տուն մտնելով՝ հարսին տանում են կանանց դասը, իսկ թագաւորը և միւսները հանգստանում են թաղթի վրայ. — Այստեղ էլ հարսը չի նըստում, մինչև որ նսաելու խալաթ չէ ստանում թագաւորի մօտիկ աղքականների մէկից: — Դալուն պէս թեթև հաց են ուտում, իսկ մթնանալուն՝ նստում են երեկոյեան ընթրիքի, որին հրաւիրում են դարձեալ գիւղի մեծամարդոց, Երեկոյեան հացի ժամանակ նորահարսը պարտաւոր է թեփշու մէջ միրգ - «մազար» ուղարկել թագաւորի և խաչեղրօր համար, որոնք և՝ ստիպուած փոխարէնը հատուցանում են, որի համար նոյն թէփշու մէջ դնում են մէկ ինձոր և վրան ցըցում շատ սպիտակ փողեր և ուղարկում հարսին: Քէֆը տրդոյի տանը տւելի է տաքանում, քան թէ՝ աղջկալ տանը. զինին հագարփեշաներով և քրեղաններով է դատարկում. Երբ կառավարիչը հատած գտը լցրած բերել է տալիս, բարձր ձայնով նոյնը իմացնում է բոլորին, տօելով «Հազար բարի ջամհաթի», որի պատասխանը տալիս են բոլորը միաբերան — «Հազար բարու տէր ըլիս: Հացից յետոյ սկսում են դարձեալ պարել և կոխ բռնել, Պարում են տւելի հարսներ ու տգափ աղջիկներ, որոնց հանդիսականները, ըստ ցանկութեան, տալիս են «շաբաշ», — որը կալում են գլխին գցած թաշկինակից կամ լաչակից: Հարսանիքի գալու երկրորդ օրը մինչև ճաշը, թագաւորը քահանայի ու մակարնե-

բի հետ գնում է գերեզմանատուն և օրհնել է տալիս իւր
հին ու նոր ննջեցեալների գերեզմանները ու ապա թթագա-
ւորա հոր սա գնում, որի համար բաւականին հեռու տեղ
մէկ ցցի վրայ խնձոր են տնկում, որը թագաւորը պէտք է
հրացանի գնդակով տեղից թռցնէ. եթէ արդ բանը թագա-
ւորին չի լաջողում, ապա վերջինս՝ կրկին նշան գնելով՝ հրա-
ցանը տալիս է մակարներից մէկին, ում և՝ ցանկանում է.
«տը ու մն խփողը թագաւորից խալաթ է ստանում: Տուն
վերադառնալով՝ «թագվերէքն» են կատարում և թագաւորի
ու թագուհու գլխից թագը վերցնում, որով և՝ հարսանիքը
վերջացած է համարւում: Միայն երեկոյեան թագաւորը ա-
ռանձնապէս կրկին հրաւիրում է խաչեղբօրը և մակարնե-
րին իրիկնահացի, ուր միմեանց կենացներ են խմում և եր-
ջանիկ օրեր մաղթում:

Գրիգորիս քահանայ Նրգնկեանց.